Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19 -ի N 1230 - Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.Անունը, ազգանունը.

ՀՀ պատվիրակություն

1. Արկադի Ավագյան - պատվիրակության ղեկավար,
2. Արթուր Մանուկյան
3. Դանիել Մկրտչյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

1. Առողջապահության նախարարության արտակարգ իրավիճակների և զորահավաքային նախապատրաստության բաժնի գլխավոր համակարգող-խորհրդատու

2. Արտակարգ իրավիճակների նախարարության «Աղետների բժշկության կենտրոն» ՊՈԱԿ ուսումնական բաժնի պետ

3. Զինված ուժերի գլխավոր վիրաբույժ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Ռուսաստանի Դաշնություն, ք. Սանկտ- Պետերբուրգ

4. Հրավիրող կողմը.

Ռուսաստանի Դաշնության առողջապահության նախարարություն, ԱՊՀ երկրների քարտուղարություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Ամրապնդել ՀՀ և ՌԴ առողջապահության նախարարությունների միջև համագործակցությունն արտակարգ իրավիճակների դեպքում:

Մասնակցել «Մասսայական սանիտարական կորուստներով ուղեկցվող ուժեղ երկրաշարժի դեպքում բժշկական օգնության կազմակերպումը» թեմայով միջազգային մարտավարամասնագիտական զորավարժությանը:

ՈՒսումնասիրել այլ պետությունների առողջապահական համակարգերի արտակարգ իրավիճակներում արձագանքման առաջավոր փորձն ու կարողությունները:

ՈՒսումնասիրել արտասահմանյան պետությունների արագ արձագանքման բժշկական կազմավորումների կառուցվածքը, համալրվածությունը ժամանակակից բժշկական սարքավորումներով ու գործիքներով, դրանց նպատակային օգտագործումը:

Խորացնել համագործակցությունն առողջապահության բնագավառում ՌԴ, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության և ԱՊՀ-ից զորավարժության մասնակից այլ պետությունների հետ:

Բժշկական ժամանակակից սարքավորումների Հայաստանի Հանրապետությանը նվիրատվության կամ ձեռք բերման հնարավորությունների քննարկում:

Այլ հետաքրքրող հարցեր:

6. Քննարկված թեմաները.

Արտակարգ իրավիճակների ժամանակ անհետաձգելի բժշկական օգնության ու սպասարկման կազմակերպումը:

Արտակարգ իրավիճակների ժամանակ օգտագործվող բժշկական ուժերն ու միջոցները, դրանց հնարավորությունները, ծավալման կարգը:

Արտակարգ իրավիճակների դեպքում բժշկական ծառայության կառավարումը, կառավարման համակարգի հետագա բարելավման ուղիները:

Ռուսաստանի Դաշնությունում օգտագործվող բժշկական նշանակության ժամանակակից տեխնիկայի ու սարքավորումների տեխնիկա-տակտիկական ցուցանիշները, նշանակությունը և օգտագործման բնագավառները:

ՌԴ և ՀՀ առողջապահության նախարարությունների արտակարգ իրավիճակների դեպքերում արագ արձագանքման համակարգերի հետագա փոխհամագործակցության առավել հեռանկարային բնագավառների քննարկում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Կազմակերպվել են աշխատանքային հանդիպումներ՝ Ռուսաստանի Դաշնության, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության առողջապահության նախարարությունների ներկայացուցիչների, ՌԴ ԱՆ «Զաշչիտա» աղետների բժշկության համառուսաստանյան կենտրոն ՖՊԲԿ-ի ղեկավարության հետ:

Քննարկվել են արտակարգ իրավիճակներում բժշկական արձագանքման կազմակերպման, բժշկական արագ արձագանքման թիմերի ձևավորման, համալրման և աշխատանքների կազմակերպման, նման իրավիճակներում բժշկական ծառայության կառավարման ժամանակակից մոդելների և այլ պետությունների հետ փոխհամագործակցության հարցեր:

Զանգվածային սանիտարական կորուստներով ուղեկցվող աղետների դեպքում միջազգային օգնության հայցման ու ստացման մեխանիզմների, ընդունող երկրի գործառույթների քննարկում:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել և խորացնել հետագա համագործակցությունն այս բնագավառում:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Այցի ընթացքում մասնակցել ենք դաշտային զորավարժության ընթացքում կազմակերպված բժշկական նշանակության սարքավորումների ու տեխնիկայի ցուցադրությանը:

Անցկացման բոլոր փուլերին՝ փլատակների տակից տուժածների ու վիրավորների դուրս բերումը, առաջին օգնության կազմակերպումն ու տեղափոխումը դեպի դաշտային պայմաններում ծավալված արագ արձագանքման բժշկական ստորաբաժանումներ (թիմեր):

Արագ արձագանքման բժշկական թիմերում վիրավորների ընդունումը, տեսակավորումը, որակավորված բժշկական օգնության կազմակերպումն ու հետագա տարահանման կազմակերպումը:

Անցկացման ժամանակ տրվել են հետաքրքրող հարցեր ու ստացվել են համարժեք պատասխաններ:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Շարունակել և խորացնել համագործակցությունը ՌԴ առողջապահության նախարարության ու համապատասխան կառույցների հետ, պլանավորել 2019 թվականին կայանալիք հայ-ռուսական համատեղ ֆորումի ընթացքում արտակարգ իրավիճակներում բժշկական արձագանքման հարցերի քննարկում:

Մինչև ս.թ. սեպտեմբեր ամիսն Առողջապահության, Պաշտպանության և Արտակարգ իրավիճակների նախարարների համատեղ հրամանով ստեղծել միջգերատեսչական աշխատանքային խումբ, որի կարևոր առաքելությունը պետք է լինի արագ արձագանքման ազգային թիմի ստեղծման աշխատանքների պլանավորումը, ստեղծումն ու ընդունված կարգի համաձայն որակավորման գործընթացի կազմակերպումը, ազգային թիմի հետ վարժանքների պլանավորումն ու անցկացումը:

Արագ արձագանքման բժշկական թիմի գործունեության համար իրավական փաստաթղթերի նախագծերի մշակում ու ներկայացում հաստատման:

Գործընկեր պետությունների հետ համագործակցության հետագա ամրապնդում ու խորացում:

Առաջարկությունների ներկայացում առողջապահության նախարարության ղեկավարությանն արտակարգ իրավիճակների ժամանակ ղեկավարման համակարգի հետագա բարելավման ուղղությամբ:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

18.06.2019թ.